ցիս, զի արասցես զորդին իմ ի տեղի իմոյ վէզիր՝ այսու արամբ որ եկն ի դրան իմում և ի գործակալութիւնս քոյ։ Եւ հանեալ նորա՝ ի նոյն օր կոչեալ զորդի նորա ի ներքս՝ տայ զկնիք վէզիրութեան նորա եւ խիլայեալ զնա եպարքոսական պատուով դարձուցանէ ի տուն։ Եւ նա ելեալ յարքայէ՝ կոչեցեալն Ահմէտ վէզիր որդի վէզիրի, արար զսուգ հօր իւրոյ, և ի հասարակել աւուր ժամու աղօթից նոցա՝ գումարէին մեծամեծք Տաճկաց և վուզարայից, պարոնաց և իշխանաց և նախարարաց արքայի՝ ընդ արքային զնամազն առնել նմա ի թագաւորական ճամին, որ կոչի Սէլիմ Սուլթան։ Եւ ի վճարմանն որ մօտ պահու յետնուց՝ Շաթբրպաշի Սուլէյման աղա ոմն որ հաւատարիմ էր նմա, ելեալ ի ձի ԺԸ արամբ և եդեալ զդին թագուտով ի կառս և քառեակ ձիօք փութացուցանէին Բ աւուրբ եւ Բ գիշերք հասեալ յետին ժամու նոցա առտ՝ մուծանելով ի քաղաքս, դնելով զնա առ թուրպէ գերեզմանատուն նորին, զոր ամ մի բոլոր չինեալ կատարէին զգործն որ վճարէրն յաւուրս յայսոսիկ. եւ մինչչեւ մտեալ դին ի քաղաքս՝ ոչ իմացան զիրսն զայս, որ էր մահ նորա խաղաղութեամբ։ Սա զբազում անմեղաց արիւն արբ, թէպէտեւ զապրստամբս արքայի նուաճեաց թէ՛ ի ներքոյ և արտաքոյ, բայց զամենայն վասն իւր արար՝ թէ ապրեսցի։ Զբազում[1]) դրունս մեծամեծաց փակեաց և զբազում մարս հեծեծանօք ի հող իջոյց, թէպէտև ի քրիստոնէից զոք ոչ սպան. զբազումս անդրամ եւ առանց հացի եւ ոռճկի ի դուրս հանէր թէ՛ յօճախէ ապարանիցն և թէ յեէնկիչարեացն, առաւել եւ ի սպահոցն. թէպէտեւ արմատք զօրպայիցն հատան յԱնատոլոյ, քիլիսայ թէֆթիչին խափանեցան, մուսէվէտէն անյայտ եղեւ,

1) զբազումս.